

քինութեամբ: Եւ եղև նմա դուստր մի  
 Խորանձէ անուն. և խնդրեցին 'ի Տեառ-  
 նէ արու զաւակ. և յես չորից ամաց  
 եղև նոցա որդի, և կոչեցաւ վարախոս.  
 րովթանգ 'ի Պարսից լեզուն, և վրաց  
 լեզուան ասիր վախթանգ. և արարին  
 խնդութիւն մեծ և բաշխ աղքատաց,  
 և ետուն գոհութիւն Աստուծոյ: Եւ  
 զարգացեալ մանկանն, սնուցանէր զնա  
 սպայապետն Սայուրմակ: Եւ մեռաւ  
 Միրզատ, և մնաց վախթանգ եօթնա-  
 մեայ <sup>1</sup>: Եւ զահի հարաւ մայր նորա  
 Սակզուխտ'ի հօրէ իւրմէ՝ թէ քինախըն-  
 դիր լինի վասն թողոյն իմ՝ զմոգու-  
 թիւնն, և աւերմանն Պարսից՝ յառնէ  
 նորա Միրզատայ. և յանձնեալ զաը-  
 ղայն, չոգաւ առ հայրն իւր՝ աղաչել  
 զնա, զի ներեսցէ նմա վասն իրացն եւ  
 զելոց: Եւ ասէ ցնա Բարզարաթ. Թո-  
 ղեալ քեզ զյնասն վասն ամենայնի.  
 բայց դարձիր 'ի տունքո. և ես զնմ՝ զօ.

<sup>1</sup> Երեսներորդ էրրորդ արքայ, խոսրովունի.  
 իշխեսց ընդ ամս 53, 'ի 446-459, յես Գրիստոս.

ըէնս Պարսից 'ի վիրս, և 'ի կամս ա-  
 պաստան արարից ընտրել իւրաքանչիւր  
 զհաճոցն իւր, կամ զմերն և կամ զվրացն:  
 Եւ նոյնժամայն առաքեաց պաշտօնեայ  
 կրակի 'ի Մցխիթա, և քրմապետ մի  
 Բինքարան կոչեցեալ. և եկեալ նստան  
 'ի Մողթա: Իսկ Սակզուխտ վարէր  
 զթագաւորութիւնն կամօք հօր իւրոյ,  
 մինչև մեռաւ նա. և էառ զիշխանու-  
 թիւնն նորա վարզաբակուր որդի նորա,  
 եղբայր Սակզխտոյ: Մեռաւ և սպայա-  
 պետն Սայուրմակ, և էառ զպատիւ նո-  
 րա Զեանչէր: Իսկ քրմապետն Նանայր  
 'ի կրօնս իւր զարձուցանել զվիրս. և  
 ոչ ոք հայէր 'ի նա, բայց 'ի սակաւուց  
 յաննյան արանց, որք կորուսին զկեանս  
 իւրեանց: Յաւուրան յայնոսիկ մեռաւ.  
 Մուշիդ եպիսկոպոսն, և կալաւ զտեղի  
 նորա Միքայէլ, որ էր 'ի Յոււնաց. որ  
 ժրութեամբն իւրով պահեաց զերևելի  
 արսն 'ի հաւատոս ճմարիտոս:

սի. 'ի սկզբան անդ ընդ խնամակալութեամբ մօր  
 իւրոյ Սակզխտոյ, և սպա առանձինն:

Շարունակելի:

Ի ՕՍԲ Ի ՄԱՍՏԱՍԻՐԱՅ

Պղատոն ասէ. Անձին յաղթել՝ քան զամե-  
 նայն առաքինութիւնս առաջին է և քաջ,  
 Ուրիողն իմաստասէր ասէ. Զար է մահ. և  
 զեւորդ շար՝ զի ոչ զքամբ:  
 ԶՊիւթագորի զգուստր՝ Արիստոտելի հար-  
 ցեալ. Որ գոյնն գեղեցիկ. ասէ. Որ յամօթոյ:  
 Իբմսութենէս Ծարասար ասէ. Աղատ մարդոյ՝  
 մեծ հարկաւորութիւն է ունել զամօթ, իսկ  
 ծառայի՝ տանջանք մարմնոյ է ունել զամօթ:  
 Կրատէս իմաստուն ասէ. Սկիզբն գիտու-  
 թեան՝ գիտութիւն գիտութեանց:  
 Իբմսութենէս ասեալ զտգէտն՝ ձև ունելով

զգիտոյն, ասէ. Երևելիք՝ ինձ, իսկ գիտելիք  
 թշնամեացն իմ:  
 Սոկրատէս ասէ. Խրատու արմատ գառն է,  
 և պտուղն քաղցր:  
 Եւրիպոպոսն ասէ ողբերգահն. Բան ինչ օխ-  
 տացեալ առանձինն՝ բազում պէտոս ունի զեղս  
 յիմաստնոց:  
 Որփեւս ասէ. Ճառեցից՝ առ որս իրաւացի,  
 և զգրունս աղետցից առ 'ի պղծոց:  
 Ներմոգիտոս պատմագիր ասէ. Կին մարդ  
 մերկացաւ 'ի հանգերձիցն, և զամօթն ընդ նմին  
 մերկացաւ:

ԳԱՂԱԿԱՅԵՐ ՆԱԽԵՆԱՅ